Հավելված
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 238-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

Երևան 2013

Բովանդակություն

Ներածություն

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը,

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը,

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները,
III.1. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկները,

IV. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար անհրաժեշտ այլ դրույթներ:

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի տարեկան գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված նպատակի, ներառում է տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը, Հանձնաժողովի կողմից 2014 թվականի ընթացքում իրականացվելիք մրցակցային քաղաքականության իրականացման գերակա ուղղությունները, առկա հիմնախնդիրների հիման վրա սահմանում է ապրանքային շուկաներում մրցակցության խթանման համար անհրաժեշտ միջոցառումները, արդի պայմաններում մրցակցության խրախուսմանն ու զարգացմանն ուղղված կարգավորման մեխանիզմները:

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Երկրի տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրներից է հանդիսանում մրցակցային միջավայրի շարունակական բարելավումը, որն առավել բարենպաստ պայմաններ կարող է ապահովել ձեռնարկատիրական գործունեության, շուկաների զարգացման և միջազգային չափանիշներին համապատասխանեցման, հասարակության կենսական պահանջների ամբողջական բավարարման, ինչպես նաև սպառողների շահերի արդարացի պաշտպանության համար:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ աշխատանքներ են տարվել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ պայմանների ապահովման, գործարար միջավայրի բարելավման, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ուղղություններով, ինչի մասին են վկայում համաշխարհային հանրության կողմից տրված Հայաստանի Հանրապետության վարկանիշային գնահատականները:

Ըստ այդմ նշենք, որ յուրաքանչյուր տարի Դավոսի Համաշխարհային տնտեսական ֆորումն իրականացնում է տարբեր երկրների գործունեության վերլուծություն և վերջիններիս դասակարգում իր կողմից մշակված հաշվարկման մեթոդաբանության համաձայն և դրանք հրապարակում Համաշխարհային մրցունակության զեկույցի 113 հենանիշերի տեսքով, որոնք բնութագրում են տնտեսության 12 «սյուները»: Համաձայն Համաշխարհային տնտեսական ֆորումի 2013-2014 թվականների մրցունակության մասին զեկույցի (համեմատվել են 148 երկիր)՝ Հայաստանի Հանրապետությունը, այս տարի ևս, 2012-2013 թվականների նկատմամբ (համեմատվել են 144 երկիր) բարելավել է իր մրցունակության ցուցանիշը 3 կետով՝ զբաղեցնելով 79-րդ տեղը: Ինչպես հայտնի է, այս կամ այն երկրի մրցունակության գնահատման ժամանակ անցկացվում են երկրի տարբեր ոլորտներին առնչվող վերլուծություններ, և այդ ցուցանիշների հիման վրա ձևավորվում է մրցունակության ագրեգացված ցուցանիշը: Հարկ է նշել, որ մրցակցության ոլորտին առնչվող երեք ցուցանիշները, որոնցում երկիրն արձանագրել է նշանակալի առաջընթաց, իրենց էական ազդեցությունն են ունեցել Հայաստանի Հանրապետության մրցունակության դիրքի բարելավման գործում:

Մասնավորապես Հայաստանը **տեղական մրցակցության ուժգնության ցուցանիշով** բարելավել է իր դիրքը 28 կետով՝ զբաղեցնելով 102-րդ տեղը և արձանագրելով մեծ առաջընթաց տարածաշրջանի երկրների համեմատ: Այսպես, Հայաստանից հետ են մնացել Ադրբեջանը՝ 26 կետով, Վրաստանը՝ 21 կետով: Հայաստանի նկատմամբ ԱՊՀ երկրներից հետ են մնացել Ղազախստանը՝ 18 կետով, Մոլդովան՝ 17 կետով, Ռուսաստանը՝ 11 կետով, Ուկրաինան՝ 4 կետով: Եվրոպական երկրներից Ռումինիան այս ցուցանիշով անկում է արձանագրել և Հայաստանին իր դիրքով զիջում է 13 կետով:

Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության ցուցանիշով Հայաստանը բարելավել է իր դիրքը 19 կետով՝ զբաղեցնելով 97-րդ տեղը: Այս ցուցանիշով ևս Հայաստանն արձանագրել է մեծ առաջընթաց տարածաշրջանի երկրների նկատմամբ (նշենք, որ այս ցուցանիշով Ադրբեջանն արձանագրել է անկում՝ 13 կետով): Այսպես, Հայաստանից հետ են մնում Վրաստանը՝ 41 կետով, Ադրբեջանը՝ 30 կետով: ԱՊՀ երկրներից Հայաստանն առաջ է գտնվում Ուկրաինայից՝ 40 կետով, Մոլդովայից՝ 36 կետով, Ռուսաստանից՝ 19 կետով: Արևելյան Եվրոպայի երկրներից Ռումինիան Հայաստանից հետ է մնացել 16 կետով:

Մրցակցության վրա շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների ազդեցության ցուցանիշով Հայաստանը բարելավել է իր դիրքը 15 կետով՝ զբաղեցնելով 75-րդ տեղը: Այս ցուցանիշով նույնպես Հայաստանն արձանագրել է մեծ առաջընթաց տարածաշրջանի երկրների նկատմամբ (նշենք, որ այս ցուցանիշով Ադրբեջանն արձանագրել է անկում՝ 19 կետով): Այսպես, Հայաստանից հետ են մնացել Վրաստանը՝ 44 կետով, Ադրբեջանը՝ 8 կետով: ԱՊՀ երկրներից Հայաստանն առաջ է գտնվում Մոլդովայից՝ 58 կետով, Ուկրաինայից՝ 57 կետով, Ռուսաստանից՝ 18 կետով, Ղազախստանից՝ 3 կետով: Հայաստանն առաջատար դիրք ունի Արևելյան Եվրոպայի երկրներից Սլովենիայի, Սլովակիայի, Ռումինիայի և Հունգարիայի նկատմամբ:

Առաջիկա տարիների ընթացքում Հանձնաժողովի գործունեությունն ուղղված է լինելու Դավոսի Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող Համաշխարհային մրցունակության զեկույցում մրցակցության ոլորտին վերաբերող ցուցանիշների բարելավմանը՝ չնայած առաջընթացի մակարդակը դժվար է

կանխատեսել և պայմանավորված է տարբեր գործոններով, որոնց ապահովումը ոչ միայն կախված է Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունների իրականացման և ինստիտուցիոնալ կառույցների գործունեության բարելավմամբ, այլ նաև մյուս երկրների արձանագրած դիրքով: Այս առումով Հայաստանի Հանրապետությունը նշված ցուցանիշներով կարող է էապես բարելավել իրավիճակը, սակայն դիրքի առումով՝ շատ չնչին առաջընթաց ապահովել կամ մնալ նույն դիրքում:

Հանձնաժողովի կողմից ձեռնարկվող միջոցառումները հիմնված են ապրանքային շուկաների վերլուծության արդյունքների հիման վրա: Ստորև բերված են Հանձնաժողովի կողմից 2010-2013 թվականների ընթացքում ուսումնասիրված ապրանքային շուկաների համապատասխան ցուցանիշների վերլուծության արդյունքները (Աղյուսակ 1):

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված ապրանքային շուկաներ 2010թ. – 2013թ. (հունվար-սեպտեմբեր ամիսներ)

Աղյուսակ 1

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐ	***ՏԱՐԻ***			
	2010	***2011***	***2012***	***2013*** *հունվար-սեպտեմբեր*
Ապրանքային շուկաների քանակը	**56**	**19**	**22**	**12**
որոնցից բարձր կենտրոնացված	*26*	*16*	*10*	*3*
միջին կենտրոնացված	*26*	*3*	*11*	*7*
ցածր կենտրոնացված	*4*	*-*	*1*	*2*
Շուկաներ, որտեղ գերիշխող սուբյեկտներ չկան	*16*	*-*	*10*	*9*
Շուկաներ, որտեղ առկա է մեկ գերիշխող սուբյեկտ	*19*	*4*	*1*	*1*
Շուկաներ, որտեղ առկա է երկու գերիշխող սուբյեկտ	*12*	*6*	*9*	*2*
Շուկաներ, որտեղ առկա է երեք գերիշխող սուբյեկտ	*9*	*9*	*2*	*-*

Հարկ է նշել, որ 2013 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում ուսումնասիրված 12 ապրանքային շուկայից 3-ը (25,0%)՝ ըստ կենտրոնացվածության

ցուցանիշի որակվել է որպես բարձր կենտրոնացված, 7 ապրանքային շուկա (58,3%)՝ միջին կենտրոնացված և 2 ապրանքային շուկա (16.7%)՝ ցածր կենտրոնացված: Ուսումնասիրված 9 ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ չկան, 1-ում առկա է մեկ գերիշխող տնտեսվարող սուբյեկտ, 2-ից յուրաքանչյուրում՝ երկու գերիշխող տնտեսվարող սուբյեկտ:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված ապրանքային շուկաների կենտրոնացվածության մակարդակները և գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների առկայությունը
2013թ. (հունվար-սեպտեմբեր ամիսներ)
(գծապատկեր 1 և գծապատկեր 2)

Գծապատկեր 1



Գծապատկեր 2



Հատկանշական է, որ բարձր կենտրոնացված 3 ապրանքային շուկայում տնտեսական գործունեություն է ծավալում 32-ից մինչև 61 տնտեսվարող սուբյեկտ, միջին կենտրոնացված 7 ապրանքային շուկայում՝ 12-ից մինչև 99 տնտեսվարող սուբյեկտ, և ցածր կենտրոնացված 2 ապրանքային շուկայում՝ 52–ից մինչև 388 տնտեսվարող սուբյեկտ:

Ցուցանիշների որոշակի բարելավման մասին են վկայում 2013 թվականին ուսումնասիրված ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանների համեմատությունը 2012 թվականի ցուցանիշների հետ: Այսպես, եթե 2012 թվականին ուսումնասիրված ապրանքային շուկաներից 45.5 տոկոսն էին կազմում բարձր կենտրոնացված շուկաները, 50.0 տոկոսը՝ միջին կենտրոնացված և 4.5 տոկոսը՝ ցածր կենտրոնացված, ապա 2013 թվականին ուսումնասիրված ապրանքային շուկաներից բարձր կենտրոնացված են եղել միայն 25 տոկոսը, իսկ միջին և ցածր կենտրոնացված ապրանքային շուկաները համապատասխանաբար կազմել են 58.3 և 16.7 տոկոս: Եվ եթե 2012 թվականին ուսումնասիրված ապրանքային շուկաներից 45.5 տոկոսում չի եղել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ, ապա 2013 թվականին այդպիսի շուկաները կազմել են ուսումնասիրված շուկաների 75.0 տոկոսը:

Ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակի վրա այլ գործոնների հետ միասին իր դրական ազդեցությունն է ունեցել նաև Հանձնաժողովի կողմից իրականացվող տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային համաձայնությունների, անբարեխիղճ մրցակցության դեպքերի հայտնաբերմանն ուղղված ակտիվ և նպատակաուղղված գործողությունները, դրանց արդյունքների հրապարակայնացումը: Նշված ուղղություններով իրականացվող աշխատանքները նպաստում են ազատ մրցակցային միջավայրի ձևավորմանը՝ ստանալով սոցիալ-տնտեսական մեծ նշանակություն:

Վերջին տարիներին Հանձնաժողովն ակտիվ ուսումնասիրություններ է իրականացրել հակամրցակցային համաձայնությունների և մրցակցությունը սահմանափակող այլ գործողությունների բացահայտման ուղղությամբ, անց է կացրել բազմաթիվ հրապարակային վարույթներ՝ առանցքային ուշադրություն դարձնելով պետական գնումների ոլորտի հնարավոր հակամրցակցային խնդիրներին:

Փորձը ցույց է տալիս, որ մրցակցային օրենսդրության խախտումները շարունակում են մնալ ակտուալ խնդիր, ինչի մասին են վկայում Հանձնաժողովի 2013 թվականին իրականացված սոցիալական ոլորտում գործող 88 հաստատության կողմից (ծերանոց, մանկատուն, գիշերօթիկ հաստատություն, մանկապարտեզ) սննդամթերքի, գույքի և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված շուրջ 200 մրցույթի ուսումնասիրության արդյունքները: Մրցութային

փաթեթների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ սննդամթերքի ձեռքբերման մրցույթներում, որոնց մասնակցել են շուրջ 35 տնտեսվարող սուբյեկտ, 8 տնտեսվարող սուբյեկտի վարքագծում առկա են մրցակցության օրենսդրության խախտումների մասին վկայող հանգամանքներ: Հանձնաժողովը բացահայտել է, որ ընկերությունները պետգնումների մրցութային գործընթացների շրջանակներում վարել են համատեղ փոխհամաձայնեցված քաղաքականություն՝ հայտնաբերելով այդ մասին վկայող մի շարք հանգամանքներ: Այսպես, հայտարարված մրցույթի մասնակիցների միջև հաղթողի վերաբերյալ նախապես ձեռք է բերվել պայմանավորվածություն: Միևնույն կազմակերպությունը, հաղթող ճանաչվելով մեկ մրցույթում, պարտվել է մեկ ուրիշում՝ նույն ապրանքների գծով ներկայացնելով ավելի բարձր գնային առաջարկ, որպեսզի հաղթող ճանաչվի իր հետ փոխկապակցված ընկերությունը: Որոշ դեպքերում էլ ընկերություններից մեկը, հաղթող ճանաչվելով մրցույթում, հրաժարվել է ներկայացնել համապատասխան փաստաթղթերը և մատակարարել ապրանքները: Արդյունքում տեղը զիջել է իր հետ փոխկապակցված և ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած մյուս ընկերությանը: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ապրանքների ճնշող մեծամասնության մրցութային փաթեթներով ներկայացված գներն էապես գերազանցել են վերջիններիս շուկայական գները: Փաստորեն պետական գնումների շրջանակներում տեղի է ունեցել մրցակցության սահմանափակում և պետական բյուջեի միջոցների անարդյունավետ օգտագործում, ինչը Հանձնաժողովի կողմից որակվել է հակամրցակցային համաձայնություն: Վերը նշված տնտեսվարող սուբյեկտներից 5-ի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում: Իսկ մյուս 3 տնտեսվարող սուբյեկտների, մասնավորապես՝ «Երեքնուկ», «Ամարաս Յուս» և «Սեար Գրուպ» ընկերությունների նկատմամբ նշանակվել է մրցակցային օրենսդրությամբ նախատեսված առավելագույն տուգանք, քանի որ վերջիններս առաջին անգամ չէ, որ թույլ են տվել մրցակցային օրենսդրության խախտումներ և հայտնվել Հանձնաժողովի տեսադաշտում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հակամրցակցային համաձայնությունները հանդիսանում են մրցակցային օրենսդրության խախտումներից առավել վտանգավոր և միևնույն ժամանակ պահանջում են ապացույցների ձեռքբերման համար լայն իրավասությունների առկայություն, այդուհանդերձ

Հանձնաժողովը շարունակելու է առանձնահատուկ ուշադրությամբ հետևողական լինել հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ:

Մրցակցության զարգացման հիմնախնդիր է հանդիսանում շուկա մուտք գործող նոր տնտեսվարող սուբյեկտների համար հավասար պայմանների ստեղծումը: Չնայած Հայաստանի Հանրապետությունում նվազեցվել են ապրանքային շուկայի մուտքի վարչական և այլ տեսակի խոչընդոտները, սակայն որոշ շուկաներում մուտքի խոչընդոտներ են ստեղծվում այդ շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից:

Հանձնաժողովը 2013 թվականին համապատասխան դիմումի հիման վրա ուսումնասիրություն է իրականացրել դեղերի շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի կողմից շուկայի մուտքի խոչընդոտներ ստեղծելու ուղղությամբ: Մասնավորապես, էնտերալ զոնդային սննդի համար հայտարարված մրցությում վերջինս ներկայացրել է ավելի ցածր գին այն չափաբաժինների համար, որոնցով ունեցել է մրցակից (այդ հանգամանքը հիմնավորելով իր արտասահմանյան մատակարարից զեղչերի տրամադրմամբ) իսկ այն չափաբաժնի համար, որի գծով չի մրցակցել այլ ընկերությունների հետ, հակառակը՝ էապես բարձր գին: Բացի այդ, ընկերությունն էնտերալ զոնդային սննդի ձեռք բերման գնի նվազմանը համարժեք չի իջեցրել դրա մանրածախ վաճառքի գները:

Հանձնաժողովն ընկերության գործողությունները և վարքագիծն «Էնտերալ զոնդային սնունդ» ապրանքային շուկայում համարել է գերիշխող դիրքի չարաշահում:

Քանի որ ընկերության նկատմամբ որոշում է ընդունվել հակամրցակցային վարքագիծ դրսևորելու, մասնավորապես՝ գնումների գործընթացում գերիշխող դիրքի չարաշահման համար, վերջինս «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև ՀՀ Կառավարության որոշմամբ ընդգրկվել է այն տնտեսվարող սուբյեկտների ցանկում, որոնք իրավունք չունեն մասնակցելու գնումների գործընթացին 6 ամսից մինչև 1 տարի ժամկետով:

Հանձնաժողովի գործունեության և պետական շահագրգիռ մարմինների հետ համագործակցության արդյունքում պետական գնումների ոլորտում նման ազդեցության միջոց Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է առաջին

անգամ: Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում շարունակելու է համագործակցության ընդլայնումը պետական գնումների ոլորտում, ինչը, անկասկած, կնպաստի պետական գնումների գործընթացում առողջ մրցակցության զարգացմանը՝ բոլոր հետևանքներից բխող դրական միտումներով:

Հանձնաժողովի կողմից մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ շարունակական հսկողությունը թույլ է տալիս օպերատիվ հայտնաբերերել և կանխարգելել մենաշնորհ և գերիշխող դիրքի չարաշահումները, մասնավորապես, երբ վերջիններիս կողմից ծառայությունները տրամադրվում են ոչ բավարար՝ ստեղծելով սպառողների համար արհեստական խոչընդոտներ:

Այսպես, Հանձնաժողովն ուսումնասիրություններ է իրականացրել ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների ոլորտում: Մասնավորապես քաղաքացիները բողոքել են, որ «ԱրմենՏել» ընկերության ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների բաժանորդները, երբ արգելափակում են միջքաղաքային/բջջային զանգերը, արգելափակվում են նաև ֆիքսված հեռախոսակապի այլ օպերատորների ցանցեր ուղղված հեռախոսազանգերը: «ԱրմենՏել» ընկերության նման վարքագիծը Հանձնաժողովի կողմից որակվել է որպես գերիշխող դիրքի չարաշահում և վերջինիս տրվել է նախազգուշացում՝ խախտումները վերացնելու և հետագայում բացառելու հանձնարարությամբ:

Հանձնաժողովը հայտնաբերել է դեպք, երբ ընկերությունը թույլ է տվել գերիշխող դիրքի չարաշահում՝ ջրազրկելով կազմակերպությանն առանց հիմնավոր պատճառների: Կազմակերպության ջրամատակարարման դադարեցումը, որն իրականացվել է առանց ուսումնասիրելու գործի փաստական հանգամանքները, այդ թվում՝ վթարի առաջացման պատճառները, համարվել է օրենդրությանը հակասող առևտրի պայմանների պարտադրում և ընկերության կողմից դրսևորված նման վարքագիծը Հանձնաժողովի կողմից որակվել է որպես գերիշխող դիրքի չարաշահում, իսկ գերիշխող դիրքի չարաշահման համար ընկերությանը տրվել է նախազգուշացում և խախտումները վերացնելու և հետագայում բացառելու հանձնարարություն:

Հանձնաժողովը դեռևս 2012 թվականին բողոք էր ստացել «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության գործունեության վերաբերյալ: Խոսքը վերաբերում էր տոմսերի վաճառքի և դրանց հետվերադարձի խնդիրներին: Մասնավորապես

Ընկերությունն էլեկտրոնային տոմսերի դեպքում դրանք ընդհանրապես հետ չէր վերցրել, իսկ թղթայինի դեպքում գանձել էր տուգանք՝ տոմսի արժեքի 15%-ի չափով: Նաև տոմսերի ձեռքբերման համակարգն այնպիսին էր, որ թույլ չէր տալիս միաժամանակ ձեռք բերել մեկնման և հետվերադարձի տոմսերը, ինչպես նաև վագոնում ազատ տեղերի միջև ընտրություն կատարել: Բողոք էր ներկայացվել նաև էլեկտրոնային տոմսերի բարձր գների վերաբերյալ: Հարուցված վարույթի ընթացքում, ի շնորհիվ Հանձնաժողովի օպերատիվ միջամտության և բերված ծանրակշիռ փաստարկների, ընկերությունը լուծել էր վերոնշյալ խնդիրների հիմնական մասը, մասնավորապես՝ էլեկտրոնային տոմսերի հետվերադարձի խնդիրը՝ ներդնելով տոմսերի վերադարձման ժամկետից կախված սանդղակ, որը ստեղծել էր սպառողների համար առավել բարենպաստ պայմաններ, և գրավոր պարտավորություն էր ստանձնել որոշակի ժամանակահատվածում շտկելու դեռևս տվյալ պահին առկա խնդիրները:

Ընկերությունը 2013 թվականի մայիս-հունիս ամիսների դրությամբ կատարել է նաև ստանձնած պարտավորությունները և լուծել հետևյալ խնդիրները.

1. 2013 թվականի հունիսի 15-ից ամբողջովին ներդրվել է միջազգային գնացքների ուղևորային փաստաթղթերի ձևակերպման ավտոմատացված (Օրիոն) ծրագրի նորացված տարբերակը, որն ապահովում է ինտերնետով մեկնման և հետվերադարձի էլեկտրոնային տոմսերի ընտրությունը մեկ գործողությունով,
2. ինտերնետ տոմսերի վաճառքի համար սպասարկման արժեքը նվազեցվել է մոտ 2 անգամ,
3. ներդրվել է սեզոնային գնացքների համար տոմսերի վաճառքի նոր համակարգ, որն ապահովում է տոմսերի ազատ, առանց սահմանափակումների վաճառք:

Զանգվածային լրատվական միջոցների հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին, Հանձնաժողովի «թեժ գծի» միջոցով ստացված բողոքներին օպերատիվ արձագանքումը Հանձնաժողովի կարևոր գործառույթներից է: Դա թույլ է տալիս ոչ միայն անմիջական կապ պահպանել սպառողների, քաղաքացիների և մրցակից ընկերությունների հետ, աշխատել թափանցիկ և արդյունավետ, այլ նաև կիրառել կանխարգելիչ միջոցներ և դադարեցնել

տնտեսվարող սուբյեկտների կողմից հնարավոր խախտումները: Մասնավորապես Հանձնաժողով ստացված բողոքի հիման վրա և Հանձնաժողովի միջնորդությամբ լիազոր մարմինը վերանայել և իջեցրել է Երևան-Վանաձոր և հակառակ ուղղությամբ չհիմնավորված բարձրացված ուղևորափոխադրումների փոխադրավարձը: Ծրագրային տարում Հանձնաժողովը ևս շարունակելու է նմանօրինակ գործընթացները՝ ապրանքային շուկաներում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրումը և հնարավոր չարաշահումների հայտնաբերումը:

Տնտեսական համակենտրոնացման պետական կարգավորումը հանդիսանում է մենաշնորհների հանգեցնող դեպքերի կանխման կարևոր գործիքներից՝ ուղղված տնտեսության կայունության ապահովմանը և մրցակցության զարգացմանը: Ուստի համակենտրոնացման վերահսկման գործառույթը հանդիսանում է մրցակցային քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Համակենտրոնացման պետական վերահսկողությունը միտված է մրցակցային միջավայրի վատթարացման արգելմանը, գերիշխող դիրքի հնարավոր հանգեցման կամ գերիշխող դիրքի ամրապնդման կանխարգելմանն ու բացառմանը: Այդ պատճառով էլ համակենտրոնացումների առավել խոշոր գործարքներն իրականացվում են Հանձնաժողովից թույլտվություն ստանալու դեպքում: Հատկանշական է, որ վերջին տարիներին էականորեն ավելացել է համակենտրոնացման թույլտվության համար Հանձնաժողով ստացվող դիմումների քանակը, ինչը վկայում է գործարարների իրազեկվածության և օրենքի հանդեպ պատասխանատվության բարձրացման մասին: Հաշվի առնելով վերոնշյալը և Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունները՝ Հանձնաժողովը 2014 թվականին առավել կենտրոնացնելու է ուշադրությունը համակենտրոնացումների վերահսկման վրա: Ընդ որում խնդրահարույց համակենտրոնացումների դեպքում իրականացնելու է շուկայի խորքային վերլուծություն դիտարկվող համակենտրոնացման հնարավոր ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի վրա պարզելու նպատակով՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով առաջադեմ պետությունների կողմից վերջին տարիներին հաճախ օգտագործվող նորագույն մեթոդները և մեխանիզմները: Համակենտրոնացումների նկատմամբ ամբողջական վերահսկողություն

իրականացնելու համար մշակվելու է հստակ քաղաքականություն համակենտրոնացումների բացահայտման ուղղությամբ: Մասնավորապես կմշակվեն տնտեսվարող սուբյեկտների միջև հնարավոր գործարքների վերաբերյալ իրավասու մարմիններից համապատասխան տեղեկատվություն ստանալու մեխանիզմներ, և ստացված տեղեկատվության հիման վրա կիրականացվեն հետագա ուսումնասիրություններ:

Մրցակցության պաշտպանության, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից կարևոր խնդիրներից է հանդիսանում անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտումը և դադարեցումը: Այդ նպատակով Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են գտնվելու առավել բարձր ռիսկայնություն ունեցող ոլորտների շուկաները, ինչպես նաև աշխատանքներ են իրականացվելու 2013 թվականի ընթացքում հայտնաբերված խախտումների և չարաշահումների կրկնակիության կանխման, հայտնաբերման և վերացման ուղղությամբ: Շարունակվելու է վերահսկողությունը գովազդի, ծառայությունների, սննդամթերքի և առավել մեծ սոցիալական նշանակություն ունեցող ապրանքների ներմուծման, արտադրության և իրացման ոլորտներում՝ տնտեսական մրցակցության օրենսդրության հնարավոր խախտումների՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտման և դրանց համապատասխան իրավական գնահատական տալու, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության ուղղությամբ: Նախատեսվում է ակտիվորեն շարունակել մամուլի հրապարակումներով, քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների դիմումներով, հասարակական կազմակերպությունների կողմից բարձրացված խնդիրների վերաբերյալ վարչական վարույթների իրականացումը:

Ապրանքային շուկաներում ապրանքների հագեցվածությամբ, բնակչության համեմատաբար ցածր վճարունակությամբ պայմանավորված՝ տնտեսվարող սուբյեկտները հաճախ ցուցաբերում են անբարեխիղճ մրցակցության վարքագիծ: Այս առումով Հանձնաժողովն անց է կացրել լայնածավալ ստուգումներ տեղերում՝ բացահայտելով տնտեսվարողների կողմից անբարեխիղճ գովազդի միջոցով մրցակցության օրենսդրությունը խախտելու մի շարք դեպքեր: Մասնավորապես՝ Հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում հայտնաբերել է զանգվածային

լրատվական միջոցներով, ինտերնետային կայքերով, ռադիոյով և հեռուստատեսությամբ, SMS հաղորդագրությունների միջոցով հեռարձակվող անբարեխիղճ գովազդի շուրջ 20 դեպք: Նշված դեպքերը Հանձնաժողովի կողմից որակվել են հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն, և մի շարք տնտեսվարողների նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ:

Հաճախակի են դարձել բողոքները կապված մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ այլ տնտեսվարող սուբյեկտի իրավունքի օգտագործման, ինչպես նաև յուրացման փաստերի վերաբերյալ:

Այսպես, Հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում հայտնաբերել է այլ տնտեսվարող սուբյեկտի կողմից գրանցված ապրանքային նշանի օգտագործման, այլ ընկերության կողմից կատարված աշխատանքները որպես սեփական աշխատանքի արդյունք ներկայացնելու, գրանցված ապրանքային նշանին շփոթության աստիճանի նման չգրանցված ապրանքային նշանի օգտագործման կամ առաջարկած ապրանքների նկատմամբ շփոթության առաջացման՝ անբարեխիղճ մրցակցության գործողության շուրջ 8 դեպք: Հանձնաժողովը մի շարք գործերով, որոնք հիմնականում վերաբերում էին շինարարական աշխատանքների, քիմիական ապրանքների արտադրության ոլորտներին, կիրառել է պատասխանատվության միջոցներ: Իսկ առանց իրավատիրոջ համաձայնության ապրանքային նշանների օգտագործման, ինչպես նաև արտադրության և իրացման ընթացքում գրանցված ապրանքային նշաններին շփոթության աստիճանի նման չգրանցված ապրանքային նշանների օգտագործման համար ընկերություններին տրվել է զգուշացում:

Հանձնաժողովը նաև բացահայտել է հասարակության մոլորեցման՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորման մի շարք դեպքեր ապրանքի բնութագրեր (արտադրող տնտեսվարող սուբյեկտի անվանում, արտադրության տարեթիվ, ամիս, օր) և այլ տեղեկատվություն չհիշատակելու առնչությամբ և մի շարք տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոց:

Վերջին ժամանակահատվածում լայն տարածում է ստացել որպես օրգանական կամ էկոլոգիապես մաքուր սննդամթերքի շրջանառությունը: Ուսումնասիրության ընթացքում Հանձնաժողովը բացահայտել է, որ 8 տնտեսվարողներ սուբյեկտների

կողմից արտադրվում են «Էկոլոգիապես մաքուր արտադրանք», «Բիո», «Էկո», «Օրգանական» և նման անվանումներով մթերքներ՝ առանց դրանց համապատասխանությունը փաստող հիմքերի առկայության: Խախտումներ են հայտնաբերվել մասնավորապես հացի, հրուշակեղենի, մեղրի, պահածոների, ձավարեղենի, թեյի և այլ շուկաներում: Ի պատասխան Հանձնաժողովի պահանջի, վերոնշյալ ընկերությունները հիմնավորել են, որ տեղյակ չեն եղել ՀՀ օրենսդրության պահանջներին, հարուցված վարչական վարույթի ընթացքում օպերատիվ կերպով ձեռնամուխ են եղել խախտումների վերացմանը, և քանի որ նմանատիպ խախտում էին իրականացրել առաջին անգամ, Հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվել է առավել մեղմ պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում: Միաժամանակ Հանձնաժողովը կոչ է արել սպառողներին, կասկած հարուցող նման դեպքերի առնչվելիս թեժ գծի միջոցով դիմել Հանձնաժողով:

Հանձնաժողովն ուսումնասիրություններ է իրականացրել զուգահեռ ներմուծման հետ կապված մի շարք դեպքերի առնչությամբ: Նշված խնդիրը այսօր շատ արդիական է նաև ԱՊՀ և ԵՄ անդամ պետություններում: Մինչ արդյունաբերական արտադրողները կողմ են ընդհանուր սահմանափակումների պահպանմանը՝ նպատակ ունենալով պահպանել պետությունների միջև գոյություն ունեցող ապրանքների գնային տարբերությունները, սպառողները գտնում են, որ նման տարբերությունը շփոթություն է առաջացնում, ինչը նաև միջազգային առևտրի քաղաքականության իրականացման և առևտրային հնարավոր խոչընդոտների վերացման խնդիր է: Հանձնաժողովը, ի թիվս այլ պետությունների լիազոր մարմինների, առաջիկայում առավել խորացնելու է ուշադրությունը զուգահեռ ներմուծման և մրցակցության փոխկապակցվածության խնդիրների լուծման և դրանցից բխող հարցերի կարգավորման ուղղությամբ:

Ծրագրում նշված են այն միջոցառումները և մեխանիզմները, որոնք հիմնականում նպատակաուղղված են մրցակցային դաշտը կատարելագործող օրենսդրական փոփոխությունների կիրառմանը, ինստիտուցիոնալ զարգացումների խթանմանն ու տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը, ֆինանսական ու մարդկային ռեսուրսներով համալրմանը:

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Ապրանքային շուկաների կառուցվածքը բնութագրող քանակական և որակական ցուցանիշների համադրումը և վերլուծումը թույլ է տալիս առավել ճշգրիտ որոշել ապրանքային շուկաների կառուցվածքը, գնահատել դրանցում մրցակցության զարգացման աստիճանը և ըստ այդմ որոշել միջամտության ուղղությունները, ձևերը և մեթոդները: Դրանց թվում կարող են լինել հետևյալ միջոցառումները.

- Բարձր կենտրոնացված շուկաների համար.
  - ապրանքային շուկայում մեկ երրորդից ավելի մասնաբաժին ունեցող տնտեսվարող սուբյեկտների շուկայական վարքագծի նկատմամբ վերահսկողություն,
  - ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից հակամրցակցային գործունեության կանխարգելում և դադարեցում,
  - նույն ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների գերիշխող դիրքի հանգեցնող կամ գերիշխող դիրքն ամրապնդող համակենտրոնացման կանխարգելում,
  - անբարեխիղճ մրցակցության կանխարգելում:
- Միջին կենտրոնացված շուկաների համար.
  - կենտրոնացվածության ցուցանիշների դինամիկայի դիտարկում և կենտրոնացվածության ուժեղացման դեպքում մրցակցության զարգացման համար անհրաժեշտ միջոցների մշակում,
  - ապրանքային շուկայում մեկ երրորդից ավելի մասնաբաժին ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեության նկատմամբ վերահսկողություն,
  - ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների միջև գործարքների կնքման նկատմամբ հսկողություն՝ հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման նպատակով:
- Ցածր կենտրոնացված շուկաների համար.
  - ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանի դիտարկում՝ շուկայի զարգացումներին հետևելու նպատակով,

- անբարեխիղճ մրցակցության կանխարգելում:

Ծրագրի առաջին գլխում նշված բոլոր հիմնախնդիրների օպերատիվ հայտնաբերման, կասեցման և լուծման գործառույթների իրականացման վրա բնականաբար դրական ազդեցություն կունենան նաև առաջիկայում նախատեսվող Օրենքի փոփոխություններն ու լրացումները:

Հանձնաժողովը մշակել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Սնանկության մասին», «Հայաստանի Հանրապետության ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծեր (այսուհետ՝ Օրենքների նախագծեր), որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:

Վերոնշյալ Օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է՝

1. Հանձնաժողովի կողմից կայացվող որոշումներով նշանակվող տուգանքների գանձման արդյունավետ մեխանիզմների սահմանմամբ,

2. Օրենքի խախտումների համար տուգանքների չափերի համար միասնական մոտեցումների ապահովմամբ:

Նշված նախագծերի ընդունումն էապես կնպաստի Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի բարելավման, Օրենքի խախտումների կանխման, բացահայտման և հետևանքների վերացման ուղղությամբ:

Ներկայումս առկա են մի շարք խնդիրներ, որոնք գործող օրենսդրությամբ լիարժեք հնարավորություն չեն տալիս Հանձնաժողովին արդյունավետորեն լուծելու իր առջև դրված խնդիրները:

1. Գործող Օրենքով սահմանված տուգանքի չափերը միասնական չեն և չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին: Մասնավորապես, մի դեպքում տուգանքի չափը որոշվում է կոնկրետ դրամային արտահայտությամբ, իսկ մյուս դեպքում կախված է տնտեսվարող սուբյեկտի նախորդ տարվա հասույթից: Հետևաբար, տվյալ դեպքում տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվում են

տարբեր մոտեցումներ՝ կախված այն հանգամանքից, թե սուբյեկտը մրցակցային օրենսդրության ինչ խախտում է թույլ տվել: Մասնավորապես, նախորդ տարում առավել փոքր հասույթ ունեցող սուբյեկտները հայտնվում են բարենպաստ վիճակում հասույթով որոշվող իրավախախտումների համար պատասխանատվության կիրառման դեպքում, իսկ խոշոր հասույթ ունեցողները՝ կոնկրետ դրամային արտահայտությամբ տուգանքների կիրառման դեպքում: Բացի այդ, տեղական և միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տվել, որ գործող Օրենքում ամրագրված տուգանքի չափերը չեն համապատասխանում միջազգային փորձին և չեն ծառայում մրցակցային օրենսդրության խախտումների կանխման նպատակի արդյունավետ իրականացմանը:

2. Հանձնաժողովի ներկա խնդիրներից է տնտեսվարող սուբյեկտների կողմից տուգանքի վճարման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը: Այսպես, հաճախ տնտեսվարող սուբյեկտները Հանձնաժողովի՝ տուգանք նշանակելու մասին որոշումը բողոքարկում են վարչական կամ դատական կարգով և խուսափում են սահմանված ժամկետում տուգանքի վճարումից, անհարկի ձգձգում են որոշման կատարումը, երբեմն էլ ուղղակի չեն վճարում նշանակված տուգանքը՝ անգամ չբողոքարկելով որոշումը: Մինչդեռ Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ Հանձնաժողովի որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը (կատարումը), սակայն նշված դրույթը կիրառության տեսակետից արդյունավետ չէ:

3. Հանձնաժողովի գործունեության, միջազգային փորձի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Օրենքում առկա են մի շարք անհստակություններ, բացեր, սողանցքներ, որոնք բացասաբար են անդրադառնում Հանձնաժողովի գործունեության արդյունավետության վրա: Մասնավորապես, բացեր և անհստակություններ առկա են Օրենքի հիմնական հասկացություններին, հակամրցակցային համաձայնություններին, գերիշխող դիրքի որոշմանը և չարաշահմանը, համակենտրոնացումներին, անբարեխիղճ մրցակցության դրսևորումներին, վարչական վարույթի իրականացմանը և մի շարք այլ խնդիրներին վերաբերող հոդվածներում:

4. Ներկայումս Հանձնաժողովում տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա համակենտրոնացման հայտարարագրման մեծ քանակությամբ

վարույթներ են իրականացվում: Նշված վարույթների իրականացումը բավականին շատ ռեսուրսներ և ծախսեր է պահանջում:

Օրենքում առկա խնդիրները լուծելու նպատակով.

1. Օրենքի նախագծով սահմանվում է տուգանքների որոշման միասնական մոտեցում՝ կախված տնտեսվարող սուբյեկտի նախորդ տարվա հասույթի չափից, ինչպես նաև տուգանքի չափերի համապատասխանեցում միջազգային չափանիշներին:

2. Տուգանքի գանձման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով սահմանվում է մեխանիզմ, համաձայն որի՝ 10-օրյա ժամկետում տուգանքը վճարած տնտեսվարող սուբյեկտների համար նշանակված տուգանքի չափը կրճատվում է 20 տոկոսով:

3. Օրենքի նախագծով հստակեցում և կարգավորում են ստանում խնդրահարույց դրույթները և իրավահարաբերությունները: Մասնավորապես, կարգավորվում են անձանց խմբի, հակամրցակցային համաձայնությունների վերաբերյալ բացառությունների, գերիշխող դիրքի չարաշահումների, համակենտրոնացումների, պատասխանատվությունից ազատման և տուգանքի չափի նվազեցման հետ կապված դրույթներում տեղ գտած անհստակությունները:

4. Խնդրի կապակցությամբ ուսումնասիրվել է միջազգային փորձը համակենտրոնացումների հայտարարագրման վարույթների ընթացակարգերի վերաբերյալ: Ուսումնասիրված բոլոր երկրներում հայտարարագրման նպատակով համակենտրոնացման մասնակիցներից գանձվում է հայտարարագրման վճար, որի չափը տարբեր երկրներում կախված է տարբեր չափանիշներից: Մասնավորապես, Գերմանիայում հայտարարագրման վճարի չափը պայմանավորված է համակենտրոնացման տնտեսական կարևորությամբ և Գերմանիայի մրցակցային մարմնի կատարած աշխատանքի ու նյութական ռեսուրսների օգտագործման հանգամանքներով:

Այդ կապակցությամբ Օրենքում փոփոխություն է նախատեսվում համակենտրոնացման հայտարարագրման նպատակով համակենտրոնացման մասնակիցներից հայտարարագրման վճարի գանձում, որի չափը կազմում է

համակենտրոնացման մասնակիցների հասույթների ընդհանուր չափի 0.1 տոկոսը կամ ակտիվների ընդհանուր արժեքի 0.1 տոկոսը, եթե դրա չափն ավելի մեծ է համակենտրոնացման մասնակիցների հասույթների ընդհանուր չափի 0.1 տոկոսից:

Օրենքների նախագծերի ընդունմամբ էականորեն կմեծանա տնտեսական մրցակցության օրենսդրության պաշտպանության նկատմամբ վերահսկողության, բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովման, հակամրցակցային գործունեության կանխարգելման, սահմանափակման և նախազգուշացման ոլորտներում Հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը, զգալիորեն կբարձրանա գնումների գործընթացի վերանայման ընթացակարգի արդյունավետությունը, կստեղծվեն գործուն մեխանիզմներ գնումների գործընթացում դրսևորվող խախտումների բացահայտման, վերացման, խախտում թույլ տված սուբյեկտների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման առումով:

Հանձնաժողովը շարունակելու է տնտեսական մրցակցության ոլորտում օրենսդրական բարեփոխումները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Մաքսային միությանն անդամկցելու գործընթացների արդյունքում առաջացող անհրաժեշտ օրենսդրության ներդաշնակեցման նպատակով:

Գների դիտանցումը հանդիսանում է Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաներում գների փոփոխությանը հետևելու լծակ, ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից հնարավոր խախտումների, ինչպես նաև հնարավոր հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման և կանխարգելման միջոցներից մեկը: Դիտարկվող ապրանքային շուկաներում վաճառքի փաստացի գների ամրագրման նպատակով Հանձնաժողովի կողմից իրականացվում են նաև հսկիչ գնումներ, կազմվում են համապատասխան արձանագրություններ, որոնց արդյունքում ձեռք բերված տեղեկություններն օգտագործվում են որպես փաստական ապացույցներ ապրանքային շուկաների ուսումնասիրությունների ընթացքում: Առաջին անհրաժեշտության ապրանքների նկատմամբ Հանձնաժողովի կողմից տարվա ընթացքում ցուցաբերած մշտական ուշադրության հետևանքով հնարավորություն է ստեղծվում որոշակիորեն զսպել գների

արհեստական բարձրացման միտումները, ինչպես նաև կանխել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից չհիմնավորված գների սահմանումը: Դիտանցումների ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը ոչ միայն զետեղվում է Հանձնաժողովի տվյալների բազայում, այլև տրամադրվում է պետական այլ մարմիններին, այդ թվում նաև՝ ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովին՝ հնարավորություն տալով ամենօրյա հսկողության տակ պահել ոչ միայն ցանցային վաճառակետերում իրացվող, այլև մատակարար տնտեսվարող սուբյեկտների կողմից առաջարկվող առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների գները: Հանձնաժողովի կողմից հնարավոր հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման և կանխարգելման այլ մեխանիզմներ չունենալու պատճառով 2014 թվականի ընթացքում պարբերաբար իրականացվող դիտանցումները շարունակվելու են:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության և ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովների միջև ստորագրված համագործակցության համաձայնագրի շրջանակներում շարունակվում է մրցակցային քաղաքականության իրականացման բնագավառում փորձի փոխանակումը, համատեղ ուսումնասիրությունների, վարույթների, դիտանցումների և ստուգումների իրականացումը, ինչպես նաև գործնական օժանդակության ցուցաբերումը մի շարք ուղղություններով: Պարբերաբար իրականացվող այցերի ընթացքում քննարկվում են արդյունավետ համագործակցության իրականացմանն ուղղված հիմնական հարցերը՝ առկա մրցակցային իրավիճակին համապատասխան, հանձնաժողովների կողմից լուծման ենթակա խնդիրների առանձնահատկությունները և շրջանակները, ինչպես նաև հրավիրվում համատեղ նիստեր մի շարք հրատապ մրցակցային խնդիրների վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով: Հանձնաժողովը 2014 թվականին նախատեսում է առավել գործնական աջակցություն ցուցաբերել ԼՂՀ Հանձնաժողովին, այդ թվում նաև՝ գործունեության հրապարակայնության և միջազգային համագործակցության ուղղությամբ: Մասնավորապես նախատեսվում է Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում առանձին էջով հրապարակել ԼՂՀ Հանձնաժողովի գործունեությունը, իրականացված աշխատանքները:

Աշխատանքներ կիրականացվեն նաև տնտեսական մրցակցության քաղաքականության զարգացմանը նպաստող միջազգային իրավասու կառույցներին ԼՂՀ Հանձնաժողովի ինտեգրմանն առնչվող հարցերի, այդ թվում՝ Միջազգային մրցակցային ցանցին անդամակցելու համար հնարավոր ուղիներ փնտրելու ուղղությամբ:

Հանձնաժողովը շարունակում է աշխատանքներ տանել «մրցակցային մշակույթի» ձևավորման ուղղությամբ: Այդ տեսանկյունից Հանձնաժողովն ուղղորդելու է իր գործողությունները նաև Հայաստանի մարզերում Օրենքի դրույթների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, համապատասխան նպատակային խմբերին ուսուցանմանը, Հանձնաժողովի գործառույթների և իրավասությունների վերաբերյալ իրազեկմանը, ինչպես նաև տնտեսական մրցակցության պաշտպանության գործընթացին մարզերում գործունեություն իրականացնող տնտեսվարողների ներգրավվածության բարձրացմանը: Բացի այդ, Հանձնաժողովը շարունակելու է սերտ համագործակցել սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

Հանձնաժողովը շարունակում է ակտիվ քայլեր իրականացնել Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հանրության իրազեկման բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես տարբեր լրատվամիջոցների՝ տնտեսական հարցերը լուսաբանող լրագրողների մասնակցությամբ հաճախակի կազմակերպվում են թեմատիկ սեմինարներ, որոնց ընթացքում լրագրողները հնարավորություն են ունենում տեղեկանալու Հանձնաժողովի գործունեության առաջնահերթություններին, քննարկելու մրցակցային խնդիրներին առնչվող հարցեր: Տարբեր հեռուստաընկերություններով հեռարձակվող հոլովակները նպաստում են Հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ հասարակության, այդ թվում ինչպես սպառողի, այնպես էլ տնտեսվարողի իրազեկվածության բարձրացմանը: Հատկապես այս լսարանին ուղղված քարոզչությունը, ինչպես նաև վերջիններիս տեղեկացված լինելը նպաստում է ինչպես Հանձնաժողովի հանդեպ վստահության բարձրացմանը, այնպես էլ Հանձնաժողովի առավել արդյունավետ աշխատանքին:

Ծրագրի կարևոր բաղադրիչներից է հասարակության հետ կապերի նոր մակարդակի ձևավորման ընդլայնումը: Այս տեսանկյունից Հանձնաժողովի խնդիրն է հասարակության կողմից մրցակցության կանոնների իմացության և համարժեք ըմբռնման ապահովումը, որոնք «մրցակցային մշակույթի» ձևավորման կարևոր նախապայմաններից են: Այս առումով կարևորվում է նաև Հանձնաժողովի ինտերնետային կայքի (www.competition.am) ամբողջական, մատչելի և օպերատիվ գործարկումը:

Համաձայն «Մարդկային ռեսուրսների տեղեկատվական համակարգ» համապատասխան համակարգչային ծրագրի հաստիքացուցակի՝ 2014 թվականի ընթացքում ատեստավորման ենթակա են 3, իսկ պարտադիր վերապատրաստման՝ 2 քաղաքացիական ծառայող: Տարվա ընթացքում քաղաքացիական ծառայության վերապատրաստման այլ նոր՝ այդ թվում նաև արտերկրում իրականացվելիք վերապատրաստման համապատասխան ծրագրերում կընդգրկվեն նաև այլ քաղաքացիական ծառայողներ: Անհրաժեշտության դեպքում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համալրում կկատարվի մրցույթների միջոցով:

Օրենքում նախատեսվող փոփոխությունների, ինչպես նաև այլ հրատապ պահանջների համաձայն կիրականացվեն մրցույթների ու ատեստավորումների, թեստերի և հարցաշարերի մշակում, անվանացանկի, կառուցվածքի, պաշտոնների անձնագրերի, քաղաքացիական ծառայողների անձնական գործերում փոփոխությունների հետ կապված համապատասխան ծրագրային ամրագրում և ներկայացում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ներկայացված տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և բացահայտված հիմնախնդիրները, ինչպես նաև հաշվի առնելով նախորդ տարիներին տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակած փորձը, սահմանում է այն միջոցառումների ցանկը և դրանց իրականացման ժամանակացույցը, որոնք ուղղված են մրցակցության պայմանների ապահովմանը, բարելավմանը և երկրի տնտեսական բնագավառի բարեփոխումների արդյունավետ ձևով խթանմանը: Վերոնշյալ միջոցառումները Հանձնաժողովը 2014 թվականին ծրագրում է իրականացնել տնտեսական մրցակցության քաղաքականության հետևյալ գերակա ուղղություններով.

- Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաների վերլուծությանն ուղղված աշխատանքներ՝ յուրաքանչյուր եռամսյակ,
- Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման նպատակով ուսումնասիրություն, գնահատում, օրենքի խախտման դեպքում՝ պատասխանատվության միջոցի կիրառում և դադարեցում՝ դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում,
- Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում և հնարավոր չարաշահումների հայտնաբերում, դրանց առկայության դեպքում պատասխանատվության միջոցների կիրառում՝ դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում,
- Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության իրականացում՝ դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում,
- Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում՝ դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում,
- Օրենքին հակասող պետական օժանդակության հայտնաբերում, ինչպես նաև պետական մարմինների կողմից ընդունված տնտեսական մրցակցության խնդիրներին առնչվող ակտերի ուսումնասիրություն՝ դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում,
- Մրցակցության օրենսդրության դրույթների վերանայում միջազգային համագործակցության շրջանակներում՝ տարվա ընթացքում,
- ԶԼՄ-ների հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին, «թեժ գծի» միջոցով ստացված բողոքներին օպերատիվ արձագանքում՝ տարվա ընթացքում,
- Քարոզչություն և հասարակության իրազեկվածության բարձրացում՝ տարվա ընթացքում,

- Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում՝ տարվա ընթացքում,
- Միջազգային կառույցների հետ համագործակցություն՝ տարվա ընթացքում:

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով, ելնելով օրենսդրությամբ ամրագրված գործառույթներից՝ Ծրագիրն իրականացվում է մրցակցության կարգավորման հետևյալ մեխանիզմների կիրառմամբ.

1. Օրենքի խախտման վերաբերյալ ստացված դիմումներին, ահազանգերին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին օպերատիվ արձագանքում:
2. Պարբերաբար դիտանցումների իրականացում և դրանց արդյունքների վերլուծություն:
3. Օրենքի խախտումների հայտնաբերման նպատակով ստուգումների և հսկիչ գնումների իրականացում:
4. Պատասխանատվության միջոցների մեղմման սկզբունքի կիրարկում և դրա համար անհրաժեշտ պայմանների ապահովում:
5. Օրենքի խախտումների կանխարգելման նպատակով զգուշացում:
6. Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ մշտական հսկողության իրականացում:
7. Հասարակական խորհրդի նիստերի անցկացում:
8. Օրենքի դրույթների արդյունավետ կիրարկումն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտերի կատարելագործում և մշակում:
9. Իրավական ակտերի ուսումնասիրություն և մրցակցության խոչընդոտների վերացում:
10. Հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովում, այդ թվում՝ պաշտոնական ինտերնետային կայքի պարբերաբար թարմացում և ԶԼՄ-ներին օպերատիվ տեղեկատվության տրամադրում:
11. Հասարակության իրազեկվածության բարձրացում, այդ թվում՝ տեղեկագրերի հրապարակման, սեմինարների և կլոր սեղանների կազմակերպման միջոցով Օրենքի դրույթների, դրանց խախտման հետևանքների, Հանձնաժողովի իրավասությունների և գործառույթների, ինչպես նաև խախտված իրավունքների վերականգնման հնարավորության վերաբերյալ տեղեկացում:
12. Համագործակցություն պետական կառավարման մարմինների, հասարարական և միջազգային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

III. 1. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ

Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մրցակցային խնդիրները մեծապես կապված են նաև այլ պետական մարմինների գործունեության հետ: Ուստի ակնհայտ է, որ Հանձնաժողովն ի վիճակի չէ միայնակ պայքարելու Հայաստանի Հանրապետությունում առկա բոլոր մրցակցային խնդիրների դեմ, անհրաժեշտ են բոլոր իրավասու պետական մարմինների ակտիվ և համակողմանի գործողությունները Հայաստանի Հանրապետությունում մրցակցային իրավիճակի բարելավման նպատակով:

Հանձնաժողովի գործունեության ընթացքում առաջանում են բազմաթիվ խնդիրներ, որոնք Հանձնաժողովի գործառույթների իրականացման դաշտից ուղղակիորեն դուրս են, և հաճախ անհրաժեշտություն է առաջանում պետական այլ պատասխանատու մարմինների հետ համատեղ լուծումներ գտնել: Այդ իսկ պատճառով Հանձնաժողովը մշտապես համագործակցում է այլ շահագրգիռ պետական մարմինների հետ: Մասնավորապես, երբ մրցակցային խախտումներ են բացահայտվում այլ պետական մարմինների գործունեության ոլորտներում, Հանձնաժողովը մշտապես տեղեկացնում է այդ մարմիններին առկա բացահայտումների վերաբերյալ և առաջարկություններ ներկայացնում խնդիրների կարգավորման նպատակով:

Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում շարունակելու է ընդլայնել համագործակցությունը ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ տրանսպորտի և կապի, ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության նախարարությունների, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության ծառայության, ՀՀ մարզպետարանների հետ:

Բացի այդ Հանձնաժողովն ակտիվ համագործակցելու է իրավապահ մարմինների, հատկապես ՀՀ գլխավոր դատախազության հետ, որին ներկայացվում է տեղեկատվություն Հանձնաժողովի կողմից բացահայտված այն խախտումների վերաբերյալ, որոնք կարող են պարունակել նաև ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարքի հատկանիշներ:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովը նախատեսում է ավելի ակտիվացնել հասարակական խորհրդի գործունեությունը, որի նպատակներն են Հանձնաժողովին աջակցելը, տնտեսվարող սուբյեկտներին և հասարակությանը տնտեսական մրցակցության վերաբերյալ հարցերի քննարկմանը մասնակից դարձնելը, մրցակցային միջավայրի զարգացմանը նպաստելը:

Հանձնաժողովի և ՀՀ կենտրոնական բանկի միջև համագործակցության համաձայնագրի ներքո հնարավորություն է ընձեռվում համակենտրոնացումների արդյունավետ վերահսկման նպատակով ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն արժեթղթերով կատարվող գործարքների և այդ գործարքները կատարած անձանց վերաբերյալ:

Մրցակցային քաղաքականության զարգացման գործընթացում կարևոր դեր ունի դատական համակարգը: Մրցակցային մարմնի անկախության և հեղինակության մակարդակի վրա անմիջական ազդեցություն են թողնում դատարանների կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում քննվող գործերով կայացվող վճիռները: Դատական համակարգի բարեփոխումների գործընթացում այս տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում ներգրավել մասնագիտացված դատավորների ու դատական ծառայողների, ինչպես նաև բարձրացնել նրանց հետագա կարողությունների և տեղեկացվածության աստիճանը՝ օտարերկրյա պետություններում մրցակցային գործերի քննության կարգի և ձևավորված պրակտիկայի ուսումնասիրման միջոցով: Նշված խնդիրների լուծման լավագույն ուղին մնում է դատավորների հետ ակտիվ քննարկումների և սեմինարների կազմակերպումը:

IV. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ

Հանձնաժողովն իր գործունեության նախորդ տարիներին արդյունավետ համագործակցություն է ծավալել Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային և դոնոր կազմակերպությունների, արտերկրի մրցակցային կամ հակամենաշնորհային համանման մարմինների հետ: Հանձնաժողովի գործունեության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարումը:

Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացնելու Մաքսային Միությանը Հայաստանի Հանրապետության միացման գործընթացների շրջանակում նախատեսվող միջոցառումների կատարման ուղղությամբ: Մասնավորապես ղեկավարելու է Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 2013 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 834-Ա որոշմամբ ստեղծված Հակամենաշնորհային կարգավորման աշխատանքային խումբը և ապահովելու է Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2013 թվականի սեպտեմբերի 19-ի նիստի թիվ 37 արձանագրային որոշմամբ սահմանված «Մաքսային Միությանն անդամակցելու նպատակով իրականացվելիք առաջնահերթ միջոցառումների ցանկ»-ով նախատեսված գործառույթների իրականացումը:

Հանձնաժողովը բազմակողմ համագործակության շրջանակներում անդամակցում է Միջազգային մրցակցության ցանց (ՄՄՑ/ICN), Էներգետիկ համայնքի մրցակցության ցանց (ԷՀՄՑ/ECCN) կազմակերպություններին և ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդին (ՀՔՄԽ/MCAП), ինչպես նաև սերտ համագործակցում է Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ/OECD) և ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովի (ՄԱԱԶՀ/UNCTAD) հետ: Հանձնաժողովը 2014 թվականին շարունակելու է այս համագործակցությունը, որի արդյունքում կձևավորվեն և կհաստատվեն մրցակցության քաղաքականության կիրարկման և օրենսդրությունների համապատասխանեցման առումով համատեղ

գործողությունների շրջանակները, լավագույն փորձը և համատեղ ուսումնասիրությունների իրականացման մեխանիզմները:

Հանձնաժողովն իր գործունեության վերջին տարիներին երկկողմանի սերտ համագործակցություն է ծավալել, մասնավորապես՝ ԱՊՀ անդամ պետությունների, Գերմանիայի Դաշնության, Լիտվայի Հանրապետության, Ֆրանսիայի մրցակցային մարմինների և ԱՄՆ Առևտրի դաշնային հանձնաժողովի հետ: Ծրագրային տարում Հանձնաժողովը նախատեսում է ամրապնդել առկա հարաբերությունները և քայլեր ձեռնարկել երկկողմ համագործակցության հետագա ընդլայնման համար:

Միաժամանակ Հանձնաժողովը շարունակելու է տարբեր միջազգային համաժողովների և սեմինարների ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության բնագավառում պետական քաղաքականության իրականացման վերջին զարգացումները և աշխատանքներ է իրականացնելու Հայաստանի Հանրապետությունում համանման միջոցառումներ կազմակերպելու գործում, ինչը տարբեր միջազգային կառույցներին հնարավորություն կընձեռի համարժեք գնահատելու երկրում մրցակցային իրավիճակի վարկանիշը և կնպաստի միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացներին:

Միջազգային համագործակցության արդյունքում մշակվում են ծրագրեր, որոնք ուղղված են.

- ինստիտուցիոնալ զարգացմանը,
- տնտեսական մրցակցության օրենսդրությունը միջազգային չափորոշիչներին և մեխանիզմներին համապատասխանեցմանը,
- արտերկրյա մրցակցային մարմինների հետ համատեղ ուսումնասիրությունների իրականացմանը,
- կարգավորող տարբեր ոլորտներում մրցակցության քաղաքականության կիրարկման հայեցակարգերի մշակմանը,
- փորձի փոխանակմանը և լավագույն փորձի կիրառմանը,
- մասնագետների որակավորմանըև
- մրցակցության ոլորտում քարոզչության բարձրացմանը:

Երկրի գործընկերության ռազմավարության շրջանակներում տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրային ուղղություններից ելնելով՝ Հանձնաժողովը նախատեսում է շարունակել աշխատանքները Միջազգային արժույթի հիմնադրամի (ՄԱՀ/IMF) և Համաշխարհային բանկի (ՀԲ/WB) հետ, ինչը կնպաստի անհրաժեշտ օրենսդրական բարեփոխումներին և կխթանի Հանձնաժողովի աշխատակազմի կարողությունների բարելավումն ու ոլորտային ուսումնասիրությունների իրականացումը:

Հանձնաժողովը շարունակելու է համագործակցությունը Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության հետ տնտեսական մրցակցության օրենսդրության և կիրարկման ոլորտում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի առումով՝ կապերի ամրապնդման և համատեղ ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Հանձնաժողովը Գերմանիայի միջազգային համագործակցության (ԳՄՀ/GIZ) ընկերության հետ «Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում շարունակելու է բանակցությունները՝ ընդլայնելու համագործակցությունը մրցակցության քաղաքականության կիրարկման բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագրի հաստատման ուղղությամբ: Ծրագրով նախատեսվում է ընդլայնել համագործակցությունն անբարեխիղճ մրցակցության գործերի վարման շուրջ միջազգային փորձագետի խորհրդատվության տրամադրման, Հայաստանի Հանրապետությունում մրցակցության քաղաքականության մասին տեղեկացվածության բարձրացման, Հանձնաժողովի աշխատակիցների համար դասընթացների կազմակերպման և Գերմանիայի Դաշնության կարտելային գրասենյակի (Բունդեսկարտելամտ) մասնագետների միջև փորձի փոխանակման, ինչպես նաև մրցակցային քաղաքականության իրականացման և կիրարկման արդի խնդիրների վերաբերյալ տարածաշրջանային ֆորումների կազմակերպման ուղղությամբ:

Ծրագրային տարում, հաշվի առնելով տնտեսական հարցերով հայ-ամերիկյան աշխատանքային խմբի 2012 թվականի գործողությունների ծրագրի իրականացման շրջանակներում Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ/USAID) և ԱՄՆ Առևտրի դաշնային հանձնաժողովի

(ԱՄՆ ԱԴՀ/US FTC) հետ համագործակցության արդյունքներն ու ձեռքբերումները, Հանձնաժողովը ներկա փուլի հիմնախնդիրներից ելնելով և առաջացող նոր խնդիրներին միջազգային չափանիշներին համապատասխան լուծումներ տալու նպատակով, շարունակելու է բանակցությունները 2014 թվականին ինստիտուցիոնալ զարգացման նոր համատեղ ծրագրի իրագործման շուրջ: Ծրագրով նախատեսվում է աջակցել մրցակցության քաղաքականության ռազմավարական ծրագրերի մշակմանը, Հայաստանի Հանրապետությունում մրցակցության քաղաքականության կիրարկման արդյունավետության բարձրացմանը, սպառողների շահերի պաշտպանության ոլորտում նոր մոտեցումների ձևավորմանը: Այս համագործակցությունը հնարավորություն կընձեռի ԱՄՆ ԱԴՀ-ի և ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի հետ կապերի ամրապնդմանը, նպաստելով Հայաստանում գործող օտարերկրյա ընկերությունների (ամերիկյան կապիտալի ներգրավմամբ գործող տնտեսվարող սուբյեկտներ) գործունեության համար հավասար մրցակցային պայմանների բարելավմանը, այդ թվում նաև՝ տնտեսական մրցակցության հարցերի վերաբերյալ Հայաստանում Ամերիկայի առևտրային պալատի հետ համատեղ ծրագրերի իրականացմանը:

Հանձնաժողովը նախատեսում է ընդլայնել փոխգործակցությունն ԱՄՆ ՄԶԳ-ի «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության» ծրագրի շրջանակներում՝ նպաստելով Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը և բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ պայմանների բարելավմանը: